



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ Վ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՏԱՐԻ ԹԻԻ 3

ՀԱՐԱՐ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ԱՊՐԵՍՏՈՂՈՐ ԵՍՈՒՆՈՂՈՐ

ԶԵՆԻԹ

ԱՊՐԵՍՏՈՂՈՐ ԵՍՈՒՆՈՂՈՐ

ՄԻԱԿ ՆԵՐԿԱՑԱՑՈՒՑԻՉ

Գ. ՍԱՐԳԻՍՈՑ ԵՒ ԸՆԿ.


Պաշտի-Գալու, Օռոգաի-Պաք հաստատութեան ղեկ, Թիւ 16

(آ. آصاڤوريان) شرکت مطبعه — باب عالی حاده سنه ۱۳۲۶

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պաշտի-Ալի հաստատութեան Թիւ 52

Հատոր 40 փարս



Ձեռքի, ոտի ու ոտի եւ ձեռքի
վրանցամայն մեքենաներ
կը գտնուին

Անկարելի է որ ընտանիք մը առանց կտրի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ գէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղաւակի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ռ

ՀԱՅՏԱՅՈՒՆԻ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատնի մէջ:

ՍԻՆԿԵՐԻ
ՄԱՍՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- | | |
|----------------|--|
| ՌԵՐԱ | (1. Մեծ փողոց, Պօն Մարշէի դէմ, թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէլի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, թիւ 13 . |
| ՍԿԻՒՏԱՐ | Ձարչը Պօյու, թիւ 120 . |

Կատարեալ երաւեսաւորութիւն

Մասնահաշիւի գաւառներու քոչոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, թիւ 343 եւ 343 կրկին, Տիւզօղլուի տունը:



ԻՆԵՒԵԼՔ ՕՐԱ-

ԹԵՐԹ ազգային, գրական եւ ֆաղուփական:
— Բաժանորդագրութիւն՝ տարեկան 4. Պոլսոյ համար 80 զրուշ, գաւառներու համար 108 զրշ. և օտար երկիրներու համար 35 ֆր.: Ձեռքէ վաճառուած՝ ջաւր փառա: Հասցէ՝ Ղալաթիա, Բամանասօ փողոց: **ԱՐԵՒԵԼՔ** հրա լորակ կ'եղլէ ամէն օր, կէս օրին, լընաւեալ բովանդակութեամբ, ընտիր յօդուածներով, թարմ լուրերով ու նորագոյն տեղեկութիւններով:

ԱՐԵՒԵԼՔ, իր վերակազմուած խրմբագրութեամբ և իր կարող աշխատակիցներ

րով, առաջնակարգ տեղ մը կը գրաւէ տեղական հայ մամուլին մէջ, օր աւուր աւելի հրապուրիչ դառնալով՝ նորանոր բարեփոխներու շնորհիւ զորս ներմուծած է թերթին մէջ: Իր առաւելութիւններէն մէկն է ՊԱՏԿԵՐԱԶՍԻԴ ըլլալու հանգամանքը, որով իր ընթերցողներուն կը ներկայացնէ պարբերաբար: Ծանօթ Դէմքեր և երբեմն ալ տեսաբաններ: Ոչ նուազ կը գնահատուին իր մասնագիտական յօդուածները, եկեղեցական, կրօնական, տնտեսական-սեզանաւորական, երկրագործական, իրաւաբանական եւայլն, բացի զբական, բանասիրական գրուածքներէ, օրուան տեսութիւններէ ու Զուարթ նօթերէ, որոնք նիւթերու ճօն պէսպիսութիւն մը կը կազմեն:



ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ — ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԵԱՆ

ԺԲ. ՏԱՐԻ ԹԻՒ 3

ՇԱՐԱՐ

15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1907

ԹԱՏԵՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԷՆ

ՄԵՐ ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻՆԵՐԸ

— Ինչո՞ւ, կը հարցնեմ Մնակեանին, ինչո՞ւ համար նոր դերասանուհիներ բեմին վերայ տեսնելու բազմը չ'ունենար թատերասէր հասարակութիւնը, որ միշտ նորութեանց կը սպասէ՝ իր քաջակերութիւնը ընծայելու համար Օսմանեան վաղեմի խումբին։

Ու Վարպետը՝ իր նշանակալից ակնարկը չորս կողմ պտտցնելով՝

— Պատճառը չատ պարզ է ու ամօշնուն յայտնի. նախ՝ մի՛ մոռնաք որ հարուստ՝ զարգացած՝ բարձր կոչուած դասակարգէն չէ որ պիտի փափաքին դերասանուհի ըլլալ. դեռ այդ փափաքելի բարձրութեան հասած չէ Արուեստին գնահատումը և ճանաչողութիւնը. սկիզբէն ի վեր՝ համեստ, միջակորեար դասակարգէն է որ ընտրած ենք մեր դերասանուհիները, ան ալ որքան դժուարութեամբ. նախապաշարումը այդ դասակարգին մէջ սա

համոզումը բոյն դնել տուած է թէ դերասանութիւնը՝ ինկած, (չըսելու համար անպարկեշտ) ասպարէզ մ'է, և վա՛յ այն աղջիկին որ անգամ մը ոտքը բեմին վերայ կը դնէ։ Ա՛լ անիկա տեսակ մը բանադրեալ արարած է, պարկեշտութեան քօղը պատռելով՝ ինքզինքը հանրութեան խծրժանքին ենթարկած է կամաւորապէս։ Ուրեմն այս սխալ ու չափազանցուած ըմբռնումը՝ միանալով գեղարուեստական ճաշակի պակասութեան՝ թատերաբեմը տեսակ մը անբարոյիկ վայր նկատուած է ուրկէ զգուշանալ ամէն պարկեշտ ընտանիքի պարտքը սեպուած է...

Թէ ո՛ր աստիճան արդարացի է այս հայեցողութիւնը, ո՛ր չափով իրաւ է ժողովուրդին այդ ըմբռնումը. ինծի չ'իյնար փաստաբանել և մեր վաղեմի դերասանուհիներուն ի նպաստ եզրակացութեան մը գալ։

Իրողութիւնն ա՛յն է որ մէկը միւսին հաս-
ցէին մեղադրանք նետելու չափ զօրաւոր
փաստեր չունի, բարոյականի անձուկ ընթըռ-
նում մը միայն իրաւունք պիտի կրնար տալ
այդ սահմանափակ մտածումն արդարացնե-
լու համար. «սահմանափակ մտածում» ըսի,
անոր համար որ ռամիկ միտքի գործ է
«բարոյական» ըսելով լոկ սեռական բարոյ-
ական հասկնալ: Աւանց լայնախոհութեան
արտակերպն գաղափարի մը կուսակից ըլ-
լալու, պէտք է ըսեմ թէ բո՛ւն արուեստը,
գեղարուեստը՝ իր ամէն տարազներուն մէջ
Բարոյական ըսելով լոկ սեռային յարաբերու-
թիւնը չի հասկնար և՛ ամէն արդիսթի՝ աստի-
ճան մը ներքի է աւելի լայնախոհ ըլլալ, և
գերասանունի մը կրնայ իրեն դէմ ուղղուած
պաշտերը անդրադարձնել զինքը խճճող
բարոյապաշտներուն...: Գուլիսի կեանքը
ըստ ինքեան փորձութեան ենթակայ է. բայց
միթէ՛ նոյնը չէ՞ ընկերութեան սա կամ նա
դասակարգին համար, և խաւերուն մէջ
գոյութիւն ունեցող ապականութիւններն ալ
հազուադէպ չեն: Եթէ՛ այդ յիշուած խա-
ւերուն մէջ նուա՛զ «փորձիչ» նուա՛զ ան-
պարկեշտ կեանք մը կրնայ ապրուիլ, քան
բեմականը: Էհ, սիրելիս, կոյր չըլլա՛նք...:
Ինձի համար, նոյնքան անբարոյ պէտք է
համարուի այն արհեստաւորը որ իր յաճա-
խորդը խաբելու համար ամէն տեսակ ստոր-
նութիւն ի գործ կը դնէ, սեւը ճերմակ ու
ճերմակը սեւ ցուցնելու հնարամտութիւնը կը
գործէ: Կեղծ, խարդախ մնանկ մը միթէ ա-
ւելի պարկեշտ քի՞բ մը պէտք է սեպուի քան
թէ արուեստագէտը որ աւելի կամ նուազ
չափով կ'արհամարհէ ճշմարիտ բարոյականը ռա-
միկ միտքերու. allons donc !

Ասիկա, ըստ ինքեան, ընդհանուր ընկե-
րական հարցերէն մէկն է որ դաստիարակու-
թեամբ միայն կրնայ լուծուիլ, այդ տեսակ
սխալ ըմբռնում մը ուղղելու համար ժամա-
նակն ու դաստիարակութիւնը միայն պիտի
օգնեն և յայտնի է թէ Թատրոնը գերազան-
ցապէս դաստիարակիչ գեր մը ունի, և ժո-
ղովուրդը ո՛րքան սիրէ Թատրոնը, այնքան
աւելի շուտ պիտի թօթափէ իր միտքը պա-
շարող կեղծ բարոյականի մշուշները: Ուրեմն
գուլիսի կեանքը խճճողուն տեղ, գեղար-
ուեստի բարձր ըմբռնումներու առաջնորդներ
ժողովուրդը, այն ատեն՝ ամենէն պարկեշտ
ու բարոյամոլ մայրիկներն ալ իրենց աղջիկը
պիտի առաջնորդեն դէպի Թատրոն ու բա-
րոյականի մասին ամենէն բժականդիր աղջիկն
ալ պիտի փափաքի գերասանունի ըլլալ:

ՍՄԲԱՏ ԴԱՒԹԵԱՆ

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ ԷԶԵՐԷՆ

Ս. ԳԻՐՔ

Ե Ի

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ

Ս. Գիրքը կ'ըսէ.

«Ամենեւին մի՛ երդնուլ:»

Մենք երդում ըրած ենք որ ամէն օր
երդնունք:

«Եթէ ակն քո աջ գայթակղեցուցանէ
զքեզ, խլիւս զնա և ընկեա ի քէն:»

Եթէ մեր աջը գեղեցիկ կնոջ մը հան-
դիպի՝ ակնոց մ'ալ կը դնենք որ կրնն աւելի
աղէկ մը դիտենք: Մտքէն գայթակղութիւն
անցնելու ժամանակ է, հոգիդ սիրես:

«Եթէ ոք ածիցէ ապտակ յաջ ծնօտ քո,
դարձո նմա և զմիւսն:»

Եթէ մէկը զմեզ ապտակէ՝ անմիջապէս
պատուոյ դատ կը բանանք, այլ է եթէ ապ-
տակ ածողը հաճի մեզի քանի մը ոսկի տալ:

«Եւ որ կամիցի առնուլ զշապիկս քո,
թող ի նա զբաճկոնս քո:»

Մենք ասոր հասարակուրդի դրութիւն կը-
սենք:

«Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր:

Պատուէր մ'որ կապացուցանէ թէ ժամա-
նակաւ բարեկամներ ալ կան եղեր:

«Այլ դու յորժամ ողորմութիւն առնիցես,
մի՛ գիտասցէ ձախ քո զինչ գործէ աջ քո:»

Ս. Փրկչեան Հիւանդանոցի հոգաբարձու-
թիւնն ամեն ամիս կը հրատարկէ լրագրաց
մէջ նուիրատուաց անունները և նուիրատու-
ներն ալ շատ գոհ են:

«Զի Մովսէս ասէ. Պատուեա զհայր քո
և զմայր:»

Մենք հարուստ զոքանչները միայն կը
պատուենք:

«Ամենայն որ հայի ի կին մարդ առ ի ցան-
կալոյ նմա, անդէն շնացաւ:»

Երանի կոյրերուն:

«Այլ եղիցի ձեր բան, այոն՝ այո և ոչն՝
ոչ:»

Մինչդեռ մեր այոն՝ ոչ է և ոչն՝ այո:
Շատ անգամ ալ մեր այոն՝ ոչ այո է և ոչ

ալ ոչ, նշանակութիւնն ապագային կորոշուի պարագայներու համեմատ:

«Որ կարողն է տանել՝ տարցի:»

Պզտիկ բացառութեամբ անոնք կը տանին որ կարող չեն տանելու կամ անոնք կը տանին որ չեն տանիր:

«Ձամենայն որ միանգամ կամիջիք՝ թէ արասցեն ձեզ մարդիկ, այնպէս և դուք աւարէք նոցա:»

Մարդիկ այն ատեն վերենք երջանիկ կը համարին երբ յաջողին ընել այլոց ինչ որ չեն ուզեր որ այլք ընեն իրենց:

Քրիստոնէութեան քրիստոնէից հետ այս համառօտ զուգակշիւը շատ ընդարձակ է համոզելու համար մեր ընթերցողներն թէ որչափ հեռացուցած են զմեզ քրիստոնէութենէ նախնան, ատելութիւնն, փառամոլութիւնն, ազահութիւնն, բարուց յառաջադիմութիւնը անձնական շահն, անձնական կիրքը զորս բառնալու համար ի միջոյ կաշխատիմ ոգի ի բռին և առաքեալի պաշտօն կը կատարեմ առանց գիտնալու:»

Ամենքը կընդունին քրիստոնէութեան տեսական մասն և կը մերժեն գործնականը:

Անցաւ արդեօք Քրիստոնէութեան դարը: Ո՛չ, երեցս ո՛չ:

Անթութիւնը հաշտ չէ քրիստոնէութեան հետ: Այս է ոմանց կարծիքը զոր բոլոր ուժովս կը մերժեմ իբրեւ տկար բարոյախօս մը: Ձեմ ընդունիր որ քմարդս աղքատանալուն պէս իրաւունք ունենայ քգող, աւաղակ ըլլու, չեմ հաւանիր որ մարդ մը դժբախտութեան մատնուելուն պէս ամեն անառակութիւն գործելու արտօնութիւն ստանայ: չեմ ներեր եր տնանկութիւնն իբրեւ մեղմացուցիչ պարագայ նկատուի այն ամեն արարքներու զոր կը դատապարտէ բարձրեայն քաջաթեւի վրայ: Աղքատը կարող է քրիստոնեայ ըլլալ, մանաւանդ աղքատն զոր այնքան սիրեց Տէրն մեր և որուն խոստացաւ երկնից Արքայութիւնը: Եւ եթէ, Աստուած մի արասցէ, աղքատն ալ չկարենայ քրիստոնեայ ըլլալ, ո՞վ պիտի ըլլայ ուրեմն Քրիստոնեայ: Յիսուս չքսաւ թէ շատ դժուար է հարուստներուն արքայութիւն մտնելը: Էսմա՞ֆները, բայց անոնք ալ օրն առ նուազն հազար սուտ կը խօսին և երկու հազար ան-

գամ կերդնուն: Ո՛վ պիտի ըլլայ ուրեմն Քրիստոնեայ: Քրիստոնէութեան յարմարութիւն ունեցող մարդ մը չ'պիտի կրնանք գտնել եղբարք իմ պատուականք: Դիցուք թէ Բարիզու արուեստահանդէսներէն միոյն համար քրիստոնեայ մը ուզուեցաւ իբրեւ հնութիւն կամ իբրեւ անգիւտ նիւթ, ի՞նչ պիտի ընենք:

Եթէ ոչ ի սէր Քրիստոսի գէթ ի սէր հնութեան քրիստոնեայ եղէք ո՞վ բարի քրիստոնեայք: Քրիստոնեայ եղէք, որովհետեւ քրիստոնէութիւնը մարդասիրութիւն է, և երբ ամենքս ալ մարդասէր ըլլանք մարդ կըլլանք: Քրիստոնէութիւնը չհակառակիր և ոչ միոյն շահուց, սեղանաւորը, վաճառականն, արհեստաւորը, գործաւորն ինչպէս նաեւ մուրացկանը կրնան օգտուիլ քրիստոնէութենէ: Ծշմարիտ քրիստոնեայ եղէք... զգուշացէ՛ք կեղծէն:

Ծ. Յ. ՊԱՐՈՆՆԱՆ

ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼՔ անդուգական օրաթերթը որ իր նոր հրատարակութենէն ի վեր attirant Տնօրէնութեամբ մը և խմբագրական անթերի առաւելութիւններով ձեռքէ ձեռք կը խլուի ընթերցողներու լուրջ դասակարգին կողմէ, այս անգամ քաջալերուած օրստօրէական փայլուն ընդունելութիւնէն՝ իր տեղը փոխած է, ալ աւելի յարմար, լուսաւէտ, և ընդարձակ չէնքի մը մէջ՝ Ղալաթիա, թռամվայի պողոտային վրայ Աւստրիական բօսթային դէմի կարգը:

ԱՐԵՒԵԼՔի այս նշանակելի զոհողութիւնները յայտ յանդիման ցոյց կուտան թէ գործ սրչափ յաջող վիճակի մը մէջ է, և թէ Տնօրէնութիւնն ու խմբագրութիւնը որչափ նախանձախնդիր են գործը ալ աւելի փայլուն և դիւրամատչելի ընծայելու համար:

Ջերմապէս կը շնորհաւորենք մեր Ազնիւ պաշտօնակիցը, և ի սրտէ կը փափաքինք որպէս զի ԱՐԵՒԵԼՔ կանգուն մնայ իր յաջողութեան զենիթին վրայ, ուր կը գտնուի այսօր:

ԲԵՐԱՑԻ ՕՐԻՈՐԴԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Իբրեւ թէ գեղեցիկ սեռին փաստաբանը ըլլայի, բարեկամուհիներու ստուար թիւ մը կ'ստիպեն որպէս զի Հանրագիտակի միջոցաւ պաշտպանեմ զիրենք ու վեր առնեմ իրենց բոլոր այն իրաւոնքները որոնց կը գոհուին անոնք ամէն օր, ամէն պարագայի մէջ:

Fausse position մը որ, ասկէ աւելի չի կրնար ըլլալ:

Մարդ ընտանեկան և ընկերակոն չըջանալէնքու մէջ քիչ շատ դադափար մը կրնայ յայտնել, կրնայ վերջապէս իր գիտցածը մեկնել ու ընդլայնել միտքը, սակայն այն բանը հրապարակաւ կրկնելը, հաւատացէք որ *toupetի խնդիր է քիչ մ'ալ համարձակութեան:*

Դեռ անցեալ օր մտերիմ չըջանակի մը մէջ, ուր ժողովուած էինք մի քանի բարեկամուհիներ, խնդիր եղաւ գիտնալ թէ ինչու օրիորդները զրկուած են կարգ մը աշխատութիւններէ գործ լի ու լի կրնան կատարել և որ միմիայն այրերուն յատկացուած է:

Այս կարգէն են օրինակի համար գրաշարութիւնը, գրագրութիւնը՝ մանաւանդ գիրի մեքենայով, բարենպատակ մարմիններու անդամակցութիւնը, ըլլայ Թաղականութիւն, ըլլայ Աղքատախնամ եւն. եւն.

Մեր մտերմական սահմանափակ չըջանակի մէջ բաւական պրպտեցինք պատճառները և ի վերջոյ խնդրուեցաւ ինձմէ հրապարակել այս իսկական և էական կէտը, մտածելով որ աւելի խելահաս գրիչի աշխատաւորներու տուն տալով այս պէս ալ աւելի ձեռնհասօրէն քրքրեն այս նիւթը, միշտ յօգուտ մեր օրիորդներուն որոնք ծնած են գողցես տունին և խոհանոցին համար միայն:

Յայտնի է թէ մեր համայնքին մէջ ամէն աղջիկ կոչուած չէ հօրենական հարստութեամբ պարծենալու և զայն վայելելու առանց ինքն իրմէն գործոն դեր մը ունենալու ապրուստի համար: Մեր միջակորեար դասակարգը որ ժողովուրդին 80 % օր կը կազմէ, պէտք ունին ձեռք ձեռքի աշխատու-

թեան մը, որպէս զի ապահովուի տանը հացը: Ահա այդ կարգի տուններու զաւակներէն քանի հոգի կրնաք համբել որոնք, վարժուածութեամբ, մօտիսթութեամբ և կամ դաշնակի ուսուցչութեամբ զբաղին. ու քանի հատ:

Իրաւ է թէ ասոնցմէ զատ կան շատ մը, օրիորդներ, որոնք իրենց ծնողաց բեռ մը չըլլալու համար ձեռագործով կը զբաղին և իրաւ է թէ մասամբ օգտակար ալ կ'ըլլան այդ կերպով գէթ իրենք զիրենք ազատելով, իրենց անհրաժեշտ պէտքերն ու ծախքերը ապահովելով այդ կերպով, սակայն այդքանով կրնան գոհացում տալ իրենց բազմապահանջ պէտքերուն:

Ուրեմն ինչո՞ւ մեր օրիորդները միմիայն սահմանափակուած ըլլան դարուց ի վեր սովորական աշխատութիւններու և չի գան չի նետուին բուն իսկ հրապարակի աշխատութեանց և, անոր արդար վաստակին մէջ: Այս «ինչո՞ւ»ին պատասխանելը շատ դիւրին չէ կարծեմ, քանի որ բարոյական շատ բարձր նիւթերու դուռ կը բանայ ան և որուն սեւ մէն ճառելը կարծուածին չափ սովորական չէ:

Սա չափը կրնան ըսել որ, մեր մէջ սովորութիւն եղած չէ որպէս զի աղջիկ մը իր եղբօր պէս և անոր հետ չարթուան վեց օրերը շուկայ յաճախէ ի խնդիր աշխատութեան, նոյն իսկ եթէ օրիորդ մը տեսնուի որ երկու օր իրարու վրայ չողքնաւ կը նստի, և կամ կամուրջէն կ'անցնի անմիջապէս բանքասող բերաններ կը լարուին իրեն դէմ և անհարկի զիտողութիւններ անձրեւի պէս կը տեղան իր հասցէին:

Մենք վարժուած չենք օրիորդ մը տեսնել, շուկան իր աշխատութեան մէջ: Մենք չենք վարժուած ո՛ր եւ է խանութ մը մտնալ և հոն գործ մը սակարկել անոր հետ որ երկայն մազեր ունի և գոց հագուստ կը կրէ: Մենք չենք կրնար տանիլ ի տես օրիորդի մը որ ո՛ր եւ է զբաղում մը ունի հրապարակին:

վրայ, ըլլայ կաղմարարութիւն, ըլլայ գրաշարութիւն և ուրիշ այն ամէն գործերը զորս յիշեցինք մեր գրութեան սկիզբը:

Քանի քանի օրիորդներ գիտեմ իմ մասերիմ բարեկամուհիներէս որոնք փոխանակ ամուսնութեան համար չիք երիտասարդ մը փնտռելու, հրապարակին վրայ, պատուաւոր վաճառատան մը մէջ գործ կը փնտռեն ու... դժբաղդաբար չեն կրնար գտնել ուրովհետեւ... պատշաճ չէ:

Մեր մէջ կան աղջիկներ, պարծանքով կըսեմ, որ երբ գործի գլուխ անցնին՝ օրուան դպրոցներէ կէս վկայականով չըջանաւարտներէն շատ ու շատ աւելի կանոնաւոր և գեղեցկօրէն կրնան վարել իրենց յանձնուած ո՛ր և է գործ կամ պաշտօն, բայց ցաւալի է ըսել որ, իրենց քօռսէն և մաղերը պատուար են իրենց յառաջդիմութեան:

Ինչ դժուար բան է Աստուած իմ համոզելը այս առթիւ:

Այրեր տկար կը գտնեն աղջիկներու աշխատութիւնը և հաւատ չունին թէ անոնք լի ու լի կրնան կատարել ո՛ր և է պատուաւոր զբաղում մը, ինչ որ ալ ըլլայ: Կիներ ամօթ կը սեպին, կ'այպանեն ու կը բամբասեն օրիորդի մը այրերու յատուկ զբաղում մը, գործ մը շարունակելը, և ահա այս երկու եզրերուն մէջ է որ խեղճ աղջիկներ տանը անկիւնը կը խամրին, կը հալին, կը հատնին թմրելով, փտտելով:

Եւրոպացին շատ շուտ գիտցաւ գեղեցիկ սեռին յարգը, ու անոր օժանդակութեան պէտքը զգալով բացաւ իր աշխատութեան դռները անոնց առջեւ: Եւ այսօր զարմանալով չէ որ մարդ կը տեսնէ անոնցմէ շատեր, որոնք ամբողջ վաճառատուն մը կը դարձունեն, խանութներ կը կառավարեն, տնօրէնութիւններ կը վարեն, և այսպէսով անուն, ՀԱՄԲԱՒ և ԴՐԱՄ կը շահին, միշտ պատուոյ շրջանակին մէջ:

Օրինակի համար առէք ո՛ր և է հայ օրիորդ մը և զրէք անիկայ գործի մը գլուխը, ուր այրեր ալ ըլլան աշխատող: Եւ ահա գործաւորները իրենց գործը ձգելով պիտի սկսին Ֆլիոթիլ, պատիւը անպատուութեան պիտի փոխուի, գործը պիտի կաղայ և ի վեր-

ջոյ փորձը անյաջող եւք մը պիտի ունենայ անվրէպ: Ինչու: Որովհետեւ մենք վարժուած չենք, չունինք այն բարձր գաղափարականը կնոջ նկատմամբ, մենք այսինքն մեր էրեկմարդիք կինը լոկ սիրուելու գործիք մը կը նկատեն, ցանկութեան աղբիւր մը միայն, իսկ անկէ դուրս ոչինչ:

Կինն ալ իբրեւ ՄԱՐԴ, ամէն առաւելութիւններով օժտուած ըլլալը ընդունինք նախ, այն ատեն շատ սովորական պիտի ըլլայ ամենուն համար ալ տեսնել աղջիկ մը կամ կին մը որ խանութին մէջ կը կենայ, առուտուր կ'ընէ և կամ գործարանի մը մէջ կաշիսառի, իր հակառակ սեռին առննթեր:

Լաւ կրթութիւն առած աղջիկ մը կը նմանի կղպանքի մը, որուն թուանշանները քովէ քով բերելով միայն կարելի է բանալ անոր մէջի թաքուն գանձերուն տիրանալու համար, նախ այդ թուանշանները քովէ քով բերել գիտցէք, այն ատեն միայն պիտի կըրնաք ըսել թէ՝

Կինը անստգիւտ գանձ մ'է,

Յայն վստահողը անձ մ'է,

Շատ անգամ կին մը

Խակին դէմ տանձ մ'է:

ՀԱԶԱ

Ք Ր Ո Ն Ի Կ

Սեպտեմբերի սա երկուշաբթին անձնական փորձառութեամբս կրնամ ըսել թէ դըպրոցականներուն համար սոսկալի տխուր օր մըն է:

Արդէն ընդհանրապէս ամէնէն աւելի շարժուան այդ առաջին օրն է որ մէյմէկ յիշատակներ կարթնցնէ մարդուս մտքին մէջ, օրինակի համար, ամուսնացողները այդ օրը կը յիշեն իրենց ամուսնութեան և կամ աւելի ճիշդը պէլան ծախու առած երկուշաբթինին, իսկ ամուրիները՝ իրենց ապագայ միացման երկուշաբթին: Գիւղ գացողները վերադառնի տխուր երկուշաբթին (խօսքս Ալէմ-տաղի գացողներուն համար չէ, քանի որ այդ հըրաշալի գիւղը պատուողները փոխանակ երկուշաբթի՝ երեքշաբթի օրը կը վերադառ-

նան, այսինքն՝ էլ մալրի խրդր սեփեւօր ընելէ յետոյ)։ Դպրոցականները արձակուրդին յաջորդող երկուշաբթին, և անոնց մայրերը ահագին երկու ամսուան սիրտմաշուքի ազատման երկուշաբթին։

Խեղճ մայրեր, արդեօք ինչեր կը քաշեն սա երկու ամսուան մէջ իրենց զաւակաց ձեռքէն, որոնք այդ միջոցին կ'ընեն բոլոր այն ամէն բաները, ինչ որ չպիտի կրնային ընել տարւոյն մնացեալ տասը ամսուան մէջ։

Եւ այդ վերաբացման օրը դպրոցականներու մայրերուն առաջին գործը կ'ըլլայ եկեղեցի վազել՝ մոմ մը վառելու, իրենց զաւակաց ձեռքէն ազատած ըլլալուն համար, իսկ չափահասներու մայրեր ալ՝ կարգ մը վարժուհիներու ձեռքէն ազատած ըլլալուն, որոնք արձակուրդի օրերը պարտաւր չանցունելու մտօք յաջողած էին գլխէ հանել իրենց զաւակները։

Ախ սա վարժուհիները . . .

Pardon pour l'expression :

* * *

Կրօնական ժողովին ամուսնութեան վերաբերեալ կանոնադիրը կարդացիք անշուշտ։ Շիտակը ըսելով ասանկ խորհրդաւոր ու լիւս գործ մը երբէք չէր սպասուէր մեր վեղարաւորներէն։

Մէյ մ'ալ կ'ելլենք կ'ըսենք թէ՛ մենք պօս մարդիկ ենք։ Տեսէք ի՞նչ աղւոր տնօրինութիւն մը ըրեր են։

Յետագայ պատմութենէս զատ տարբեր բան մը կրնա՞յ ըլլալ։

Օրինակի համար. Պրն. Ա. նշանուեցաւ Օր. Բ.ին հետ, և օրին մէկն ալ ամուսնութիւնը տեղի ունեցաւ Եկեղեցւոյ օրէնքին համաձայն։

Առաջին գիշերը հարս ու փեսայ առանձնացան իրենց առաջաստի սենեակը, քիչ մը խօսեցան իրարու հետ, աղէկ մը չեմ գիտեր՝ բայց անշուշտ իրենց խօսակցութիւնը ո՛չ առեւտրական խնդիրներու շուրջ կը դառնար և ո՛չ ալ թրանսվալի թուղթերուն։

Փեսան կէս գաւաթ ջուր խմեց, մինչ հարսը կը պատրաստուէր իր հարսանեկան հագուստները մէկ կողմ թողելու . . .

Գիտեմ հիմա դիմացնիդ անցած սերկեւիլ մը կուտեմի պէս բերաննիդ սկսաւ ջրոտիլ։

Ճրագը մարեցին, ինչպէս կ'ըսէ Զօլա իր Նանաին մէջ և . . . էյ չէ՛, վրաս միջնաք, ասկէ աւելին չեմ կրնար պատմել։

Մինչեւ հոս, ինչպէս տեսաք, տարօրինակ բան մը չիկայ։

Առաւօտուն փեսան իր գործին մեկնեցաւ իսկ հարսը կէս օրին երկու ժամ քնացաւ։

Իրիկունը ամուսինը գալուն դիմաւորեց, իրար ողջագուրեցին, իրար հատուրտացին, մէկ խօսքով երջանկութիւննին տեղ մը չկար վէսսէլամ։

Այս կեանքը ութ օր չարունակուեցաւ, իսկ իններորդ գիշերը կնոջը տեղ սպասուհին գինքը դիմաւորեց, և ամուսնոյն՝ կնոջը ո՛ւր ըլլալուն հարցմանը վրայ, անմանօթի մը հետ վերի սենեակը ըլլալը յայտարարեց։

Մարդը սանդուխներէն վեր ելաւ և երբ ննջասենեակը մտաւ, ի՞նչ տեսնայ աղէկ, իրեն պէս պիտաւոր մէկը կնոջը քովը եան եկած արգիլեալ պտուղին համը նայելու դրաղած էր։

Կրակ կտրեցաւ, արիւնը գլուխը ցատկեց, և երբ կը պատրաստուէր կնոջը խաճախ բան մը փակցնել, յանկարծ կինը ամուսնական հրահանգ մը հանեց բարձին տակէն ու կարդայ ըսաւ, այս օրէնքը պատրաստողները հարկաւ քենէ շատ աւելի աղէկ գիտեն թէ՛ ի՞նչ է ամուսնութեան արդի պայմանները։

Խեղճ մարդը այլայլած կարդալէ աւելի լափեց այն նախադասութիւնը ուր՝ գրուած էր թէ « ամուսին մը երբէք իրաւունք չունի ամուսնալուծում պահանջելու եթէ իր կինը իրմէ զատ Մէկ ՀՈԳԻԻ հետ միայն յարաբերութեան մէջ է »։

ՊՈՒՆՈՒՄԻՍ գոչեց, (Մնակեանի չեչտովը) ես մինչեւ հիմա կը զարմանայի թէ՛ մարդիկ ի՞նչպէս դրամ կը չահին, և չէի կրցած խելք հասցնել ատոր, հիմա ես ալ շնորհիւ այդ կանոնադրոյն՝ ճակատաբաց պիտի կրնամ առանց աշխատելու ապրուստս ապահովել։

Ամուսնիներուն աչքը լոյս ըսեմ նէ գէշ կըլլայ արդեօք։

ՀԱՄՄԷ . . .

ՆԵՐՇԱՊՈՒՀ.



Մ Ո Մ Ը Մ Ա Ր Է ...

[NOCTURNE]

(Շար. եւ վերջ)

Թէ ինչպէս ամուսնացաւ Գէորգ աղան Արուսեակին հետ, ինչպէս համոզեցին, ինչպէս համոզուեցաւ, հարսնիքը ինչպէս եղաւ, ի մէջ այլոց ովոր գտնուեցան, պսակադրութեան միջոցին, հարսը ինչ նուէրներ ընդունեց, փեսին քաւովաթը ծոռ էր թէ շխտակ, հարսին քիլքէչէն խամ էր, խաս էր, ճէհէզին սնտուկը քանի՞ խաք չամաւիւր դրած էին, բաղնիքին թասը արծաթ էր թէ նիքէլ, սանտրէրը ֆիլախիլ էին, այդ իրիկունը քանի՞ կալօն օղի խմուեցաւ, կառապաններուն քանի՞ զրուշ պախչիշ տրուեցաւ, տաներեց քահանան քանի՞ գաւաթ գինի խմեց, յատկապէս բռնուած աւեթին քանի՞ զրուշ տուին, հարսին քուրը ո՞վ եղաւ, եւայլն. ասոնք բոլորը դանց կրնենք նիւթը իր բուն գոյնին մէջ պատկերացնելու համար, և կըսկըսինք մեր պատմութեանը, այն կետէն՝ երբ մեր Գէորգ աղան երեք չորս օր իր նազէնիմ Արուսեակին հետ կենակցելէ վերջ, կը կռահէ թէ մեծ Ֆալցօ մը ըրած էր այդ աղջիկը կնութեան առնելով, քանի որ, անոր կըրթութիւնը և համարձակութիւնը, սեւ ու ճերմակի պէս հակառակ էին բոլորովին իրենին հետ:

Բայց ինչե՛ր չընեն ան ճերմերմակ օղին՝ որ խելքը կառնէ շատկեկ խմողին:

Գէորգ աղայի տունը, որ գիւղին բանուկ ճամբուն վրայ գեղեցիկ շէնք մըն էր, տարբեր ոգեւորութիւն մը, սովորականէն շատ ու շատ մեծ փոփոխութիւն մը կրած էր, շնորհիւ Տիկին Արուսեակին, որ մետաքս ոսպ տը շամպոր կոնակը՝ վեր վար կը պտըտկեր, հրամաններ տեղադրել իր բովին տակ գտնուած սպասուհիին, խոհարարին և ամէն անոնց՝ որոնք տաք կերակուր մը ուտելու համար իր դուռը կը զարնէին:

Կարծեմ չեն մոռցած մեր ընթերցողները

թէ՝ Տիկին Արուսեակ քիչ շատ գաղղիւրէն, Անգղիէրէն ալ կը խօսէր, շնորհիւ իր բանիբուն ծնողաց, որոնք՝ ինչպէս կըսեն, եղունգնեւէն խնայած, իրենց աղջկան լաւ կրթութիւն մը տուած էին, բայց չի տուած ըլլային ... ատ ալ ուրիշ:

Տիկին Արուսեակ, կարծես պահ մը դադրած ըլլալով Գէորգ աղայի պսակեալ կինը ըլլալէ, ամուսնութենէն երեք չորս օր վերջ սկսած էր ամուրիի մը կեանքը վարել: Ձիսեպել, առանց հրամանի դուրս կլլալ, իրեն համար հաճոյքներ էին գորս կը գործադրեր սանֆասօն:

— Արուսեակ, կիւլիւմ, անօթի կը մարիմ կոր հաց ուտենք, երբ կըսեր ամուսինը, տա՛

— Ճանրմ համբերէ քիչ մը, սա բառակապը լմնցընեմ, կը պատասխանէր, աչքերը գիրքէն չի զատելով:

Իրիկուն մը, Տիկին Արուսեակ, ուղեւոր իր հին ծանօթներուն ճաշ մը տալ, ուստի ամէն մէկուն զատ զատ հրաւիրագիրները զրկելէ, անոնց հաւանութիւնը առնել և խոհարարին ալ պէտք եղած ֆամացը տալէ վերջ՝ ամուսնոյն դառնալով,

— Գէորգ ...

—

— Գէորգ չես լսե՞ր ... ո՛ւֆ ...

— Խերը տեսնանք, բարեպտուղ զաւակ ըլլայ ... կըսէ ամուսինը:

— Ինչ կըսես ճանրմ ... ո՞վ է, ինչպէս զաւակ ...

— Ինչ գիտնամ, կէօյամ քի մանչ զաւակ մը ունեցեր ենք տէ, դուն ալ մարն ես եմ ... Գէորգ, Գէորգ տէյի կը կանչես կոր նէ խօշս կուգայ կոր ...

— Ո՛ւֆ ... քանի անգամ է կըսեմ նորէն չես հասկնար, ալաֆոռանկայի մէջ կինը

ամուսնոյն ածական չի տար, հասկցա՞ր ...

— Հայտէ մինակ տեղը նէ իսէ ամա՞, մարդու քով ալ ատանկ կընես կոր, հաթթա, անցած իրինկուն կէնէ Գէորգ Գէորգ տէյի կը կանչէր կոր նէ, միսաֆիրներէն մէկն ալ այլազը կը կանչես կոր տէյի գիտցաւ տէ, ջուր մըն ալ ինծի բեր ըսաւ ...

— Պարապ խօսք ... իմ հիւրերուս մէջ ատանկ մարդ չիգայ ... հիմա ինչ պիտի ըսեմ նէ անոր ականջ տուր: Աս իրինկուն հիւրեր պիտի ունենանք ... անոր համար չեմ ուզեր որ գիշերնոցը հագնիս, ինչպէս նաև բանթուֆներդ ...

— Համմէ ... ես եմ նէ մարդ տավէթ չեմ ըրեր, մաղազային ետղծին վաղը առտու պիտի գայ ...

— Ե՛ս, ե՛ս, ե՛ս հրաւիրած եմ և անոնք ալ ընդունած են, հիմա ժամէ մը կարելի է հոս կըլլան, արդէն ամէն բան պատրաստել տուած եմ ...

— Խուշիկ աղէկ ես ըրեր ամա, ֆառղին ես քի, կարգուած օրերնուս պէրի սանկ աղա տուտու դէմ դիմաց անցած տէ երկու չիֆթ լախըտը ըրած չունինք, դուռը չա՛թ, կը զարնեն վեր կեկան կոր, չիտեմ քի մնաք կընիկ առինք տէ տուն տե՛ղ շտկեցինք, չէնէ մի օռթա օյինի բացինք ...

— Չեմ գիտեր, շատ ալ սիրտ չունիմ բացատրութիւն տալու, ալաֆուանկային մէջը կինն է որ կը տնօրինէ, ամուսինը կը համակերպի ...

— Պէ կէօղիւմ, նասըրէս աչքերս դուրս կիյնան կոր, հիչ տէյիլ իսէ թէւլիկներս հագնիմ ...

— Չըլլար, պատշաճութեան դէմ է ...

— Էյ սա քօլալը եախաս հանեմ, կը խրխտուիմ կոր ...

— Էնսիւթ ...

— Հէ՞ ...

— Էնսիւթ ըրած կըլլաս հիւրերուն, կը վշտանան ...

— Ճանըմ թող կշտանան, ֆախաթ ես ալ ըռահաթ ընեմ ...

— Տէր Աստուած, չի հասկնար ... ո՛ւֆ ... կըթութեան հակառակ է, վերջէն եկողները կառնուին ...

— Պէ ճանըմ, իրենց ո՛վ ըսաւ քի ե-

կէք, հէմ ինծի պէօհիւղիւր ըրէք հէմ ալ դուք նեղուեցէք տէյի, քանի իրինկուն է կերակուրէն ետքը կուգային կոր նէ իսէ՛ ... աս իրինկուն ալ կերակուրի ելլալ գա՛լ ...

— Ե՛ս, ե՛ս ... ե՛ս հրաւիրեցի, ալաֆուանկային մէջը ասանկ է, շաբաթ մէկ երկուք տնէի կը հրաւիրեն ...:

Ասոնք ըսելէ վերջ երբ Տիկինը իր սենեակը կեկայ շտկուելու, Գէորգ աղա մինակ մնալով,

— Ծօ՛ Գէորգ, նա՞սըսըն ... կարգուեցա՞ր, հա՞, աղէկ խալթ կերար ... տէ հիմա ալ բիւսկիւլիւ պէլան առ նստէ, միւսթահաֆ տըր Գէորգ, նասըլ, կակող կակող տիւղ ըռախիները նետեցի՞ր ... հա՞ ... հիմա ալ քաչէ՛ ... օ՛խ ըլլայ: Ծօ՛ Գէորգ, կընիկը ի՞նչ պիտի ընէի, ողջ գլուխ աւետարանին տակը դրի, ծօ՛ նէ ըռահաթ ըտըմ ատամլար, իրիկունները գալուս պէս կէճէլիկս կը հագնէի, պուճախս կանցնէի կը նստէի, տացը մատներս ալ հովին կուտայի, օ՛խ ... ծօ՛ հիմա՞ ... հէմ ծունգ բարեւ հէմ ալ առխա քիւֆէսիով միսաֆիր, ես մասրաֆը ...

Ու մինչ Գէորգ աղա, ամուսնութենէն նոյն իսկ չորս օր վերջ ըրածէն զըջացած կը զառանցէր այսպէս սալօնին մէջ միս մինակ, յանկարծ սանդուխներէն երկու հոգի վեր կեկան ու չիտակ սալօն կը մտնան:

— Պօն սուա՛ռ ... ո՛ր է մատամը չիգայ ... , հոս չէ՞, դո՛ւրս ելաւ արդեօք ... սէ տռօ՛լ ...

— Ասծու բարին, ի՞նչ կայ, բա՛ն մը պիտի ըսէիք ...

— Ո՛չ ... զմեզ հրաւիրած էր տնէի ... անոր համա՛ր ... ը՛ ...

— Սանքի կերակուրի եկողները դո՛ւք էք ...

— Ը՛ ... այո՛ ... այսինքն ...

— Է՛հ ... նստեցէք հիմա կուգայ ... ես անոր ամուսինն եմ ...

— Օ՛ ... ինչ բարեբախտութիւն ... ըսելով ձեռքը կը թոթուեն, ու հագիւ կը նստին, վարէն ուրիշներ վեր կեկան, այնպէս որ տասը վայրկենի մէջ վեց հոգի և երկու կին ամբողջ սալօնը կը լեցնեն, որոնց մէջտեղը Գէորգ աղա շուարած՝ անկիւն մը կը քաշուի

ու կսկսի ապուշ ապուշ գիտել նստողները, որոնք մերթ ֆրանսերէն մերթ անգլիներէն և շատ քիչ անգամ հայերէն կը խօսէին:

— Էյ բա՛րի եկաք, խօսք կառնէ Գէորգ աղան, ամենուն հետ գէթ երկու խօսք ըրած ըլլալու համար, որոնց և ոչ մին կը ճանչնար:

— Պիէն թռուվէ, կը պատասխանէ գըլ-խարկը ձեռքին մէջ դարձնող միւսիւն մէկ ոտքին վրայ ֆուտախի պէս դառնալով:

— Աֆ կընէք ամա հրամանքնիդ աթ ճամպազի՞ էք ...

— Ա՛ ... ոչ, ի՞նչ կըսէք ... տիկինը զիս շատ լաւ կը ճանչնայ, գրեթէ միատեղ կենակցած ենք ...

— Ամէնքս ալ անանկ, կը պատասխանեն միւսները, բոլորն ալ տեղերնուն ցատկելով, ճիշդ այն ատեն՝ երբ Տիկին Արուսեակ դուռնէն ներս կը մտնար, ամբողջ սալօնը լեցնելով սուր վիճիթի հոտով մը:

— Օ՛ ... շատ շնորհակալ եմ շիտակը հրաւերս չի մերժելնուդ համար, շիտակը ըսելով մեր Գէորգ աղան մեծ մտատանջութեան մէջ էր վախճալով որ զիս կը մերժէք ...

— Օ՛ ... էս քը սաբէօ՞ ոը ֆէռ մատամ ...

— Հրամանեցէք, առջի սէֆէր նէ քի հարսնիքնուս ետքը կերակուրի միսաֆիր խապուլ կընենք կոր ... կըսէ Գէորգ աղան, ծուռ մեկնելով միւսիւն խօսքը:

— Պարտքերնիս տիկին, կը կրկնեն միւսները, և ընդհանուր խրախճանութիւն մը կսկսի սալօնին մէջ, մինչ խուրուխու ժաքէթով սպասաւոր մը կուգայ կազերը վառել:

— Ո՛հ, Տիկին, որչափ բարեբաղդութիւն է ինձ համար ձեր մօտ, նոյն իսկ ձեզ սեղանակից ըլլալ ...

— Ա՛ ... ոչ թէ միայն այս իրինկուն, այլ կը փափաքիմ, և Գէորգ աղային փափաքն ալ այն է որ՝ միշտ կրկնուին այս տեսակ ուրախառիթ պարագայներ ... կը պատասխանէ տիկինը, աչքին պոչովը ամուսնոյն նայելով, որպէս զի մի գուցէ ֆալցօ մը կոխէ:

Գէորգ աղա տեսնելով որ իրեն կարեւորութիւն տուող չիկայ, կամաց մը դուրս

կելլայ ու շիտակ սեղանատուն կիջնայ որպէս զի հովուէ:

Սեղանը շքեղօրէն շտկուած էր, ամբողջ պուքէներով և աղանդերներով, և պակաս բան մը չիկար պէտք է ըսել:

— Ինծի նայէ կիրակոս, սա չիչէկները ո՛ւրկէ գտաք ... կը հարցնէ աղան:

— Մուսաֆիրները խաւեր են աղա ...

— Աս չէրէզները ո՛վ առաւ ...

— Մանտաման ասեց ուր մենձ պախալը բիէրէ ու բուսուլան չինէ ու հրամանոցդ խաւրէ ...

— Էյ կերակուրները ինտո՞ր թէրթիպ ըրիք ...

— Չիեմ գիտնայ, ֆախաթ միեր վարպետ առտանց պէրի օղուաշմիշ կըլլի, հոտեր մը կուհանի ըմմա՞, չեմ գիտեր ի՞նչ կու պատրաստի ...

— Վա՛խ Գէորգ վա՛խ, ըսելով դուրս կելլայ ու փողոցին դուռը բանալով ինքզինքը հովին կուտայ, վրան եկած մարելիքը փարատելու համար, մինչ վերը՝ գահգահաները կաւերնան ու հեթիմ խօսակցութեան աղմուկը մինչեւ փողոց կը հասնի:

Մինչ այս մինչ այն, ճաշի ժամանակը հասնելով բոլորը մէկ վար կիջնան սեղանատուն, ուր սէռէմօնին կսկսի:

— Սանկ հրամանեցէք, կաղաչեմ ...

— Չի վաղեր ... դուք հրամանեցէք ...

— Ճշմարիտ չի վաղեր ... կը վշտանամ ...

— Գէորգ աղան թող հրամմէ ...

— Ան ուր ըլլայ նէ կը նստի, դուք հանգիստ ըրէք ... կըսէ Տիկինը, և այնպէս մը կը շարուին որ բուն տանը տէրը Գէորգ աղա, սեղանին է՛ն վարի ծայրը կոտրած աթոռի մը վրայ կը կծկուի:

Առաջին անգամ hors d'oeuvre, աղանդերները կսկսին հրամցուիլ, ան կուտէ, աս կուտէ, և պարապ պնակները տիկինը մէկ կողմէն իր ամուսնոյն քշելով,

— Գէորգ աղա տիխաթ ըրէ, սուռնք ըսէ որ վերցունեն ...

Քօնսօմէն կը բաժնուի և ամանին մէջ նոյն իսկ թգալ մը բան չի մնար, և այս պարագան դիտող հիւրերէն տիկին մը խօսք առնելով,

— Բայց կը դիտեմ որ Գէորգ աղան բան մը չուտեր կոր ...

— Այո, քիչ մը տկար է, թուլութիւն ունի ... Դուք հանգիստ ըրէք, կըսէ տիկինը, մինչ սպասաւորը Գէորգ աղայի ահանջն ի վար ...

— Զօրպան պոծաւ աղա, էտէվի կերակուրէն տի ուտես ...

Գէորգ աղա, մինչեւ այն ատեն չոր հաց կը կռծեր խեղճը անխօսուկ։

Քիչ վերջը բռնօղան ի հանդէս կուգայ, Տիկինը ձեռքովը ամէնուն պնակը երկերկու կտոր կը դնէ, ամէնքը կսկսին լզուըռտուրի ու կիրակոս ծառան կրկին մօտենալով աղային ...

— Քիւլպաստին էլ պոծաւ աղա, քէմիւկն օր ըսես չի մնաց ...

— Ֆառլին եմ օղլում, վարպետին ըսէ քի եաղին մէջը երկու հաւկիթ եփէ տէ հազրը ընէ, ետքէն մութվախ գամ տէ ուտեմ...

— Բայց Տիկին, աղան քօթլէթ ալ չի կերաւ ...

— Այո՛, ընաւ չը սիրեր ... կը պատասխանէ Տիկինը ու միւս կերակուրը կը ընրուի, ուրկէ թգալ մը բան հազիւ կը վիճակի աղային, որ բարկութենէն կեւլայ սեղանէն։

— Ա՛... աղան ինչո՞ւ կը մեկնի կը հարցնեն ամէնքը շուարած ու զարմացած ...

— Բերնին մէջի ատամնաշարը կտորած ըլլալու է, յայտնի մընէք, կ'ըսէ ու գինիի գաւաթները կը լեցնէ, անտարբեր, մինչ Գէորգ աղա, ինքզինքովէն ելած՝ սենեակ մը կը քաշուի ու կսկսի զառանցել,

— Ծօ՛ Գէորգ, պէյէնտին չու ետիին խալթա, հէ՛ ... ծօ՛ սօնը սօնը աճ տա պըռագտըլար սէնի հէ՛ ... օխ օլսո՞ւն ... միւսթահագ տըր... եւ... աղուոր Արուսեակ, թօմպուլ Արուսեակ տէյի մամածակլանտըն ... ալ սանա Արուսեակ ... քուռու էքմէք եէ քի ազլըն պաշընա կէլսին... օխ... զառընըն իւսթէ կիթտիյի տէ ճապա։

* * *

Ժամը գիշերուան վեցն է։ Զրաւիբեալները մէկիկ մէկիկ կը մեկնին ու մեր խեղճ ու կրակ Գէորգիկ աղան ի յարգանս տիկնոջ և կամ հիւրերուն, տասն անգամ երեսը ջուր

զարնելով՝ հազիւ կըցած էր քունը փախցընել, ու սալօնին մէկ անկիւնը ճարահատ կէս քուն կէս արթուն նստած՝ կանիծեր սեւ բաղդը, սեւ վերարկուլու Տէրպապան և սեւ սուռաթ միջնորդուհին, ինչպէս նաեւ սեւ խավհարը, որոնց երեսէն կը քաշէր այս բոլոր չըլլալիք անհանգստութիւնները։

— Հայտէ Գէորգ աղա, միսաֆիրները գացին, ես ալ նայէ հանուեցայ, կըսէ Արուսեակ, ճերմակ գիշերնոցին տանթէլ թուերը Գէորգ աղային երեսին քսկռտելով։

— Հա՛, գացին, էյ ինչ տէյի պառկիմ... քիչ մըն ալ խայրէթ ընենք առտու ըլլայ, չի հանուած գործիս երթամ ...

— Ամա՛ն ... մարդս մարդով է, բէք աղուոր իքում եղաւ, ասիկայ ալ պէտք էր գիտնս Գէորգիկ աղա, հարսնիքէն ի վեր երեկոյթ մը տուած չէինք ...

— Հասկցանք ամա, անթութենէս սօղլուճաններս թիւթին վժըլ վժըլ կուգան կոր ներսիդիս ...

— Հասկցայ ամա, ատէթը ան է քի միսաֆիրներուն իքում ըլլուի, մնք ինչ գըտնանք նէ կուտենք ... հայտէ եկուր պառկէ լուսուն շատ կայ ... նայէ կէս գիշերը հիմա զարկաւ ... ըսելով Գէորգ աղայի թեւը կը մտնայ ու սիրտը առնելու կանացի ձեւեր մը ... նոյն իսկ թեթեւ ... (ամօթ է չեմ ըսեր) դրոշմելով վերի սենեակը կը քաշուին, ուր Գէորգ աղա հանուելուն պէս անկողին կը մտնայ ...

— Ա՛... աս չեղաւ իշտէ Գէորգ աղա, աս ամէն գիշեր ըսեմ պիտի ... ել մոմը մարէ ...

— Անթութենէս նէֆէսս պիլէ կարճ կիւլայ կոր, դուն մարէ աս գիշեր ...

— Ո՛ւֆ ... սիրտս մի հատցնէր, ել մոմը մարէ ... կը պնդէ տիկինը ...

— Ծօ՛ ախպար փորձանք ըմըլ պու, փորձանք, ըսելով խեղճ մարդը կեւլայ մոմը կը մարէ, ու հազիւ անկողին մտած թէ չէ՝ ճը՛... ո՛... ո՛... պատուհանին ըսթոռը վեր կը փախի ու դուրսէն պայծառ լուսինը իր արծաթ լոյսը ներս կը թափանցէ և...

.....

.....

.....

Անկողինին տակէն սեւ ստուեր մը սոս-
զոսկելով դէպի դուռը կը յառաջանայ, ուր-
կէ մէջէ մէջ սենեակը կերթուի:

— Բիւթ ... կըսէ տիկինը, կռահելով
որ ամուսինը դեռ չէ քնացած ...

— Անմատա խոշոր կատու հա՛ ... կը
յարէ Գէորգ աղա, անկողինին մէջ նստելով...

— Չէ ճանճմ կատուն ըլլալու է, կեցիր
ես կեցամ ...

— Զահմէթ մընէր խուշո, դուն մոմը
մարելու իւշէնմիշ կըլլայիր կոր, նասըլ չես
վախնար կոր առ ճանաւարը քշտելու ...

— Ես չեմ վախնար, նայիմ ի՞նչ է ըսե-
լով երբ տիկինը ոտքի կեցաւ, Գէորգ աղան
ալ ետեւէն և անկէ առաջ անցնելով՝ ուղ-
ղակի կերթայ մէջի սենեակը, ուր բազմոցին
վրայ նստած կը գտնայ ... միւսիւ մը:

.....

— Բարի իրինկուն միւսիւ, գիտնալս
գինին շատ փախաւ տէ, սօխախին դուռը
շաշըրմիշ ըրիր ...

— Բառտոն ... ախ ... հազար ներո-
ղութիւն ... այո՛, այո՛ինքն ...

— Նասըլ առտուն, հէմէն հիմա, կայնէ,
ըսելով գիշերնոցին վրայէն բանթալօնը կը
քաշէ և ըռնած որսին ականջէն բռնելով՝
չիտակ վար փողոց, ուրկէ անցնող գիշերա-
պահին կը յանձնէ ջղջիկը ...

— Մոմը մարէ հէ՞ ...

— Տղան տունը ... կուի է ըրեր եղեր
տէ ... աս գիշեր հոս անցընեմ ըսաւ ...

— Փեղի ո՞վ ըսաւ քի՛ Գէորգին տունը
քավկալըլար օթէլի է տէյի ... հէ՛, աստար
հավէսդ առի՛ր եա, ես ալ առի, վաղը առ-
տու բըռթըդ ժողվէ տէ չիտակ տէրպապա-
յին տունը գնայ, էկէր ինծի ձգելու ըլլան
նէ՛ ես պաշխա տուն կը խրկեմ ... իշտէ
հասկցանք, տարւոք կարգուիլ տէ կէնճ
հորպիլիպիմպոմ կընիկ առնելուն բարոյական
խրատը, ասանկ ետխաթ օտաախէն մարդ
դուրս հանելն է եղեր ...

Առաւօտուն միջնորդ տէրպապային դուռը
շալը գլուխը՝ էալէն կարմրած աչքերով կին
մը կը զարնէր՝

Արուսեակը ...

ԼԻԼԱ

ՖԱՆԹԷԶԻ ՏՈՂԵՐ

I

ԳՈՒՄ-ԳԱՐՈՒՅԻՆԵՐՈՒՆ ԶՐՈՅՅԸ

— «Աղանի՛, կ'ըսեք, մայր մ'իւր աղջրկան,

Տահա երեկ եր, վարսիփղ փաշան,

Նոր կարկրեցի, եւ անա այսօր,

Լըւալու համար ձեռք առի երբոր,

Ի՞նչ սեսնեմ, եղեր եր բըգիկ, բըգիկ,

Զիվիի սեղեր մի քսուիւր աղջիկ»:

— «Զե՛ մայրիկ, չիյսես ասկէ չէ անի,

Սա քովի քղան՝ որ մանօյիճի

Դաս կուսայ ինծի, կը հագնի սիւբի

Քիթ բոքին, անկէ փաշա կը պաւսուի»:

II

ԲԵՐԱՅԻՆԵՐՈՒՆ ԶՐՈՅՅԸ

Փողոցի անկիւնը ամալի մըքի՛ն՝

Քոփոք մը կեցեր, դիտելով չորս դին,

Բաներ մը կ'ըսեք մարդու մ'ականջին,

Որուն՝ ես, մ'եյ մ'ալ *ֆէրհէ հէրպահին*

Կ'ունկեցդեմք լըռին: — «Օրիորդ, կ'ըսեք,

Իրաւ ինձ համար ասիկա chance է,

Հանդիպիլ քեզի, յուսալու առանց,

Կուզե՛ս անցընեմք մեկ աղուոր ժամանց,

Զուր սեղ չըվասնեմք վարկեաներն այս քանի

Եկուր, քեւս մըսի՛ր ձեր տունը երբանք:

= Լաւ, բայց մեր տունը ... աքարքըման է,

= Տեսնող, կասկածող չըլլար մեկ բանէ,

= Աս ալ լաւ, սակայն, դոնապանը կայ,

Բամբաստողներու կեցողանի վրկայ,

— Բայց, կեցի՛ր, գրայ հնարք մը հարսար,

Եթէ դոնապանն օծիս քող չըսար


Հասկնալու համար քե ի՞նչ կուզեմ ես,

Պաղարիւնութեամբ, աղուոր չէ՞, կ'ըսես

«Մօրքորոջս երիկ՝ միւսիւ Ահարոն».

= Բայց դոնապանը քուզեմ է պարոն...:

ԳՍ.ՀԳՍ.ՀՍ.



Ուր Ամբակում բաց բան
մը վրան գոց հասկցնել
կ'ուզե:

« Պաշ . . ին կիրակին »:

Համմէ՞ . . .

Այո՛ « պաշ . . ին կիրակին »:

Ինչո՞ւ առաջին բառին մէջէն երկու գիր
կ'ուզե:

Որպէս զի դու չեղար:

Ո՛վ դո՛ւք, որ պատիւնիդ մինչեւ եր-
կինքները կը հանէք և բարոյականին ծուծը
հանած էք:

Եւ ո՛վ դո՛ւք, որ պատիւնիդ մինչեւ երկ-
րին եօթերորդ խաւը կ'իջեցնէք և բարոյա-
կանին խաղաղ սիւղին կը քերթէք:

Այո՛, ձեզի ալ եմ ո՛վ բարոյականի մարմ-
նացումներ, որ մարմիննիդ բարոյականի մէջ
խօթած և բարոյականով խաբլամա ե-
ղած էք:

Դո՛ւք ալ վրանիդ կրնաք առնել . . .
կէօթիւրիւ, ով դո՛ւք որ բարոյական կը կար-
դաք անոր ասոր գլխուն, և ձեր գլուխը
անբարոյութիւններու մէջ կը խօթէք:

Կը կարծէք թէ ձեզի չեմ, ո՛վ դո՛ւք որ
պատիւնիդ այնքան բարձր կը պահէք որ . . .
հաւասարակշռութիւնը կորսնցնելով՝ վա՛ր
կիյնայ:

Եւ ով դո՛ւք, որոնց գլուխը ամպերուն
մէջ՝ իսկ քղանքը տիւրմին մէջ կը թաթաւի:

Թերեւս ձեզի ալ եմ, ով դո՛ւք՝ որ ձեր
պատիւը . . . պատիւ նշանէն ալ պղտիկ կը
տեսնէք և կարեւորութիւն չէք տար:

Ո՛վ դո՛ւք՝ որ բաց բան մը կարդալէ
ետքը աչքերնիդ սիւլայիւմէյով կը հականե-
խէք:

Այո՛, դո՛ւք ալ կրնաք այս կողմը նայիլ
ո՛վ դո՛ւք:

Դո՛ւք ալ, ո՛վ դո՛ւք, եւն. եւն. եւն.
եւ . . . ա՛յլ ը՛րն . . .:

* * *

Մարդուն մէկը տուն մը առեր է:

Երբ պատերուն հաստատուն ըլլալը կը
դիտէ եղեր:

Յանկարծ աչքերուն գիրեր կը հանդիպին:

Եւ ակնոցը դնելով կը կարդայ:

« Պաշ . . ին կիրակին »:

Աչքերը ու ոտքերը բանալով՝ դուրս կը
նետուի և կուգայ ինձի գտնել:

— Ամբակո՛ւմ:

— Համմէ՞:

— Ամբակո՛ւմ:

— Ի՞նչ է:

— Անպատուութիւն, անբարոյականու-
թիւն, ապականութիւն, տի՛ղմ, փոշի՝ ցե՛խ:

— Ո՞ր կողմը:

— Յե՛խ . . . փոշի՛ . . . տի՛ղմ:

— Ճանըմ ի՞նչ եղաւ:

— Ապականութիւն, անբարոյականու-
թիւն, անպատուութիւն . . . Ամբակո՛ւմ, մէ-
կը դիտե՛ս որ աչք հանէ:

— Ի՞նչ եղաւ սիրելիս, որ աչքդ հանե-
լու ձանձրոյթը կ'առնես:

— Գայթակղեցա՛ւ . . . գայթակղեցա՛ւ:

Ու երբ կը պատրաստուէի մարդուն աչքը
հանել մատովս, յանկարծ օձիքէս բռնելուն
պէս, քաշկռտելով տունը տարաւ ու գլուխս
պատին բռնեց . . .

Տեսայ որ կնոջ գիր է:

Հասկցայ որ, ատ տունին մէջ երբեմն
աղջիկներ կը բնակին եղեր:

Երիտասարդներ ալ կուգան եղեր, որով-
հետեւ աղջիկները զէվքճի էին:

Եւ այդ՝ երիտասարդին մէկը, կիրակի
մը . . . բոյր մը կը դրոշմէ:

Եւ այդ աղջիկներէն մէկն ալ ի յիշատակ
պատին վրայ գրեր է « պաշ . . ին կիրակին »:

* * *

Բարոյական. — (Բարոյականը բարոյականով պէտք է բարոյականացնել, բարոյականութիւնը բարոյական ամէնէն բարոյականագոյն բարձրութեան մէջ ցուցնելու համար):

Ո՛վ հայրեր, աչքերնիդ չորս բացէք:

Ո՛վ մայրեր, եթէ աչքերնիդ զօրաւոր չէ ազնոց դրէք:

Տուներնուդ դուռը մի՛ բանաք և երբ տասարդներու ճամբայ տաք:

Նոյն իսկ նշանածներն ալ մինչեւ որ հաւատքնուդ պէս հաստատ չգիտնաք թէ՛ ձեր աղջիկը ... գլուխնին պիտի ելլայ:

Ո՛վ մայրեր, ձեր աղջիկները ապագայ մայրեր ընելու համար՝ անոնց վրայ մայրութիւն ըրէք, ամէն:

ԱՆՄԵՌՈՒԿ

ՔԵՅՑՍ ԿՈՒԳԱՅ...

Երբ Իւսկիւտարի մէջ, Մնակեան խումբին կողմանէ — Բարիկի աղբահները — ներկայացումէն վերջ, թատրոնին դրանն առջեւ կը հանդիպիմ ծանօթ օրիորդի մը, որ խաղին թլոր տեւողութեանը լացած էր հեծեծանօք ու կը հարցնեն «կ'երեւայ թէ՛ շատ յուզուեցաք խաղէն այնպէս չէ՞ օրիորդ, որովհետեւ շատ լացիք», երբ անիկայ անտարբերութեամբ «եղբայրս քովս ի վեր հապրոէ սիկառա կը խմեր կոր անկէ է...» կը պատասխանէ:

* * *

Երբ կը տեսնեմ tout à la chique (ա՛հ ներողութիւն սխաւեցայ) tout à la chic պարոն մը, բառին բուն նշանակութեամբ, ձեռքը երկայնախմորակորածակի (.) (դժմած, մագառնա) պէս բարակ գաւազան մը, որ ճիւղիկ օգին մէջ կը գարծնէ և որ յանկարծ նոյն միջոցին քովէն անցնող ճատրի մ'աչքին եկած և ինք անտարբերութեամբ pardon ըսելով ճամբան շարունակած ատեն, պառաւին «բառը չըզար տէ՛ ամբը պաշնա կէչիր քէօռ օլաճախ, աչքս ալ հանէ տէ պառտօնով մը ըմցուր» ըսելը կը լսեմ:

* * *

Երբ կը սկսիմ մտածել թէ՛ Տեար Ներշապուհն ալ քնծի պէս թատրոնը հուրիի մը չափ կը պաշտէ, քանի որ ամէն գրածին մէջ թատրոն բառը գրեթէ կայ:

Ֆանաւարի

Վ. ՍԸՎԱՃԵԱՆ

Սկիւտարի Աղքատախնամին երեկոյթին մէկ շիք նկարագրական ֆանթազիին յաջորդ թիւով՝

ՆԵՐՇԱՊՈՒՀԻ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՊԱՐՏԻԶԱԿ

Վարժարանիս նպատակն է իր ուսանողներուն տալ գործնական կեանքի պահանջներուն համապատասխանող հիմնական և առողջ դաստիարակութիւն մը: Ինիկ և Ամերիկացի ուսուցչական խմբին վրայ աւելցած է, Զուգեցերացի ձեռնհաս ուսուցիչ մը՝ մասնաւոր ղոյ տալու համար նաև Ֆրանսերէն լեզուին:

Աշակերտները կը վայելեն բժշկական և ընտանեկան կատարեալ խնամք՝ վարժարանին մասնաւոր բժշկին, գիշերօթիկ հինգ ուսուցիչներու անմիջական հսկողութեան և Տիկին Զեմպրոյի մայրական խնամքներուն տակ:

Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտեմբեր (Ն. Տ.) ԴՆ. Գիշերօթիկներուն տարեթուական է 16 Օսմ. Ոսկի, որուն կէսը վճարելի է Սեպտ. ին սկիզբը, իսկ մնացեալը՝ Յունվարի մէջ: Գործիական երաժշտութեան դասին համար կը պահանջուի տարեկան մէկ ու կէս Օսմ. Ոսկի:

Թէ՛ հին և թէ՛ նոր աշակերտներ, եթէ կ'ուզեն Հայտարարաւորել կէս գնով ճամբորդել, պէտք է դիմեն Գրեգոր Էֆ. Շահպաղեանի և իրենց անունները արձանագրել տան մինչեւ Օգոստ. 17:

Աւելի տեղեկութեանց համար դիմել Մր. Բիթի կամ Վարժարանիս Պոլսոյ գործակատար Գր. Էֆ. Շահպաղեանի, Պայպ-Հառա, Կ. Պոլիս, և կամ Տնօրէնութեան, Պարտիզակ, 10—9

ՀԱՅՈՒՆԵԱՑ ՎԱՐժԱՐԱՆ

ԱՍՏԲԱԶԱՐ

Հայուհեաց Վարժարանին նպատակն է Հայ աղջիկներուն տալ լուրջ դաստիարակութիւն մը՝ դարդացած և բարեկրթ տանտիկիներ և դաստիարակութեան գործին օժանդակներ պատրաստելու համար: Վարժարանին տեսչութիւնը աշակերտուհիներուն ֆիզիքական, իմացական և բարոյական զարգացումը միշտ խղճամբար հոգածութեան առարկայ կ'ընէ: Ինիկ և Ամերիկացի 12 ուսուցիչներէ կազմուած ձեռնհաս ուսուցչական խումբ մը կ'աւանդէ Հայ., Անգլ. Թուրք. և Ֆրանս. լեզուները. ինչպէս նաև ընական, իմաստասիրական, չափական և այլ գիտութիւններ: Մնայուն կարուհի մը կ'աւանդէ ձեւագիտութեան, կարի և ձեւագործի դասերը: Գիշերօթիկներու տարեթուական է 12 Օսմ. Ոսկի, որուն կէսը պէտք է հատուցանել տա. երջմանին սկիզբը, և կէսը ծննդեան արձակուրդին: Դաշնակի և երգեսնի համար կը պահանջուի 5, 3 և 2 ու կէս Օսմ. Ոսկի, դասառութեան թիւին համեմատ: Վարժարանին յառաջիկայ տարեշրջանը կ'սկսի Սեպտ. 11 ին (Ն. Տ.) ԴՆ. Իրիկունը:

Աւելի տեղեկութեանց համար խնդրել վարժարանին յայտագիրը, կամ դիմել Մր. Բիթի, Պայպ-Հառա Կ. Պոլիս, կամ գրել Տր. Ս. Էֆ. Գալաֆեանի, Ատե. Նապետ խնամակալութեան, Ատարապար: 10—10

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍԿԻՏԱՐ. — Տեղւոյս Աղքատախը-
նամին ի նպաստ սարքուած թատերա-
կան ներկայացումին վերեսիկները գան-
ձելու համար սուռաքը բեք հաւաքիչի
մը պէտք կայ, գիմել ֆոլսաք գահվէ-
սի, կէս գիշերէն ժամ մը առաջ (Բ.Ե.):

ՆՈՅՆ. — Զրոյցի մը նայելով նոյն
իրիկունը լոթի մը մէջ խուռում խու-
ռում բազմող օրիորդ մը 257 կաղին
կերեր է, ուրիշ օրիորդ մ'ալ 14 զոյգ
պուտ . . . միս :

ԳԱՏԸ-ԳԻՒԴ. — Անցեալ իրինկուն
տեղացի ծանօթ տիկին մը սխալմամբ
Այ-Սթէֆանոսի շոգենաւը նստած ըլ-
լալուն՝ գիշերը օթէլը անցուցեր է :
(Երբեմն ինչ չիրին սխալմունքներ կը
պատահին հէ՞ տիկին . . . Ծ. Խ.) :

ԲԵՐԱ. — Գիւղերէն տակաւ հաս-
նող ընտանիքներու երեսէն, անոր ա-
սոր տունը պիճիութիւն ընողներ պո-
չերնուն վրայ իրենց ծակուղիկները
քաշուելու վրայ են :

ՆՈՅՆ. — Անցեալ իրինկուն ամուս-
նոյն բացակայութենէն օգտուիլ ուզող
տիկին մը երբ իր ծըմբին հետ Եանիի
ճաշարանը մաքսոսի օ ռաքենը կը լպռու-
տէին, յանկարծ մարդուն վրայ հաս-
նելով՝ զոյգ մը մոմէ արձաններ դար-
ձան :

ՍԱՌԸՆԱՐ. — Հոս գտնուող օդա-
փոխճիներուն ներկայ զով օգերուն սաթ-
լըճանէ զերծ պահելու համար բարե-
սիրական ընկերութիւն մը կազմուած
է, որոնք պաշտօն ունին մարդասիրա-
բար մուշտակ, չալ և ֆանելա հաւա-
քելով բաժնեւէ հիմնաքի պէս գողա-
ցողներուն :

ԽՄԲԱԳՐԱՏՈՒՆ, — Տնօրէնութե-
նէն վտարուած ինքնակոչ պուէտ մը,
որ իր թթուածները ուրիշին գիրովը
մեզ կլլեցնելու կ'աշխատի, կը խրա-
տենք զինքը որ փոխանակ այդ ճիւղին
աշխատելու, լաւ կընէ եթէ Արնավուտ
գիւղի ախրնքըն ետէք քաշէ :

ԱՄԲԱԿՈՒՄԻՆ ՀԱՆԿՈՒԿԸ ԳՏՆՈՂԻՆ
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՆՈՒԷՐ

Ամբողջ նախադասութիւն մը կելլայ հե-
տեւեալէն,

Շ տ 5 ի ն յւ (նոն ին գրաքարը
և յոգնակի ըրէք) կտրուի :

ԱՆՄԵՌՈՒԿ

Լուծումը պէտք է սա գիծին վրայ գրել.

Ստորագրուիւն

Լուծողը պիտի ստանայ յատկապէս պատ-
րաստուելիք գեղարուեստական տուփ մը
այցաքարտ :

Այցաքարդին պարունակած անունի ու
մականունի սկզբնատառերը զարդագիր պիտի
ըլլան :

Մինչեւ յառաջիկայ հինգշաբթի ով որ ա-
ռաջին անգամ լուծած Հանգազիսակի խըմ-
բագրութեան հասցունէ, ան պիտի ստանայ
գեղարուեստական քարթը, իսկ միւս ճիշդ
լուծողներու անունները պիտի հրատարակ-
ուին միայն :

Արտոմատիկ ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ե. ԱՍԱՏՈՒՐԵԱՆ

Պապր-Ալի հաստի քիւ 52.

ԱՐՍԵՆ ԼԻԻԲԵՆԻ ՏԱՐՈՐԻՆԱԿ ԿԵԱՆՔԸ

ԽԱՐՏԵԱՇ ԳԻՆԸ

Ոստիկանութեան գլխաւոր քննիչ՝ Կանիմարտ, կ'սէր տառնապետ Ֆօլանֆանի.

— Պատրաստ ե՞նք:

— Այո՛, ութը հեծելանիւով կան. և ես:

— Եւ ես, պէտք չէ որ ժէռպուա մեզմէ խուսափի... ապա թէ ոչ խերը տես, Արսէն Լիւրէնին կը միանայ, կէս միլեօնով օրիորդը կը փոխանակեն և խաղը կը լրանայ:

— Բայժ ինչու այս մարդը մեզի հետ չմիանար:

— Կը վախնայ, եթէ փորձէ միւսը մէջտեղը ձգել, այն ատեն աղջիկը պիտի կորսնցընէ:

— Ո՞ր միւսը:

— Ան:

Կանիմարտ այս բառը արտասանեց ծանր կերպով մը և քիչ մը վախկոտ, ինչպէս պիտի խօսէր դերբնական էակի մը վրայ՝ որ իրեն գէշ խաղ մը խաղացած էր:

— Ուշադրութիւն՝ յարեց կանիմարտ:

Պ. Ժէռպուա դուրս կ'ելլար և դանդաղ մը կը հեռանար: Լրագրավաճառի մը խանութին առջեւ մօտեցաւ, թերթ մը գնեց և յանկարծ ինքնաշարժ կառքի մը մէջ ցատկեց՝ որ սալայատակին եզերքը կեցած էր. մեքենան պատրաստ էր. որովհետեւ կառքը մեկնեցաւ և անյայտացաւ:

— Վա՛յ սոսկալի, բացազանչեց Կանիմարտ, ահա նորէն ի՞նչ հնարքներէն մին...:

Բայց սկսաւ խնդալ: Ինքնաշարժ կառքը Մալէրպ ծառուղին մտած ատեն կեցեր էր մեքենան խանդարուած և Պ. Ժէռպուա վար կ'իջնար:

— Շո՛ւտ Ֆօլանֆան... մեքենավարը:

Ֆօլանֆան մեքենավարին հետ զբաղեցաւ. մարդը ըսաւ թէ՛ տասը վայրկեան առաջ պարոնին մէկը երեսն ըսած էր որ՝ սպասէ լրագրավաճառին մօտը՝ մինչեւ ուրիշ պարոնի մը գալը:

— Եւ երկրորդ պարոնը ի՞նչ հասցէ տուաւ հարցուց Ֆօլանֆան:

— Հասցէ չտուաւ, մինակ «Մալէրպ ծառուղին» ըսաւ:

Սակայն այս միջոցին Պ. Ժէռպուա կառքի մը մէջ ցատկեց՝ որ մօտէն կ'անցէր:

— Կառապան, Գոնքօրտի հրապարակը ըսաւ:

Բալէ Ռուայեալ հասած էր, երբ կառքէն իջաւ. վազեց դէպի ուրիշ կառք մը և Սակարանի հրապարակը հասաւ և անկէ ալ ուրիշ կառք մը նստելով:

— Կառապան, ըսաւ, Բլաբէյրօն փողոց թիւ 25:

Երբ հասաւ, առաջին յարկը ելաւ և զանգակը հնչեց. պարոն մը դուռը բացաւ:

— Պ. Տէթինան էք:

— Դուք ալ Պ. Ժէռպուան անկասկած, ձեզ կ'սպասէի պարոն:

Փաստաբանին սալօնը մտան. ժամացոյցը Յը կը ցուցնէր:

— Հոս չէ՞, հարցուց Պ. Ժէռպուա:

— Չէ տակաւին:

— Պիտի գա՛յ:

— Ինձի կը հարցնէք, պարոն, անանկ բանի մը վրայ որ գիտնալու հետամուտ եմ. երբէք տոանկ անհամբերութիւն զգացած չէի. ամէն պարագային, եթէ գալու ըլլայ, բաւական դժուար պիտի գայ. այս տունը տանըհինգ օրէ ի վեր հսկողութեան տակ է, ինձմէ կը կասկածին կոր:

— Եւ ալ աւելի ինձմէ է որ կը կասկածին, յարեց բրօֆէօսէօրը, նոյն իսկ չեմ յուսար ոստիկաններուն՝ հետքս կորսնցուցած ըլլալին:

— Այն ատեն:

— Այդ իմ յանցանքս չպիտի ըլլայ, քանի որ կոյր զկուրայն ի՞նչ հրամաններուն հետեցայ, ԻՐՄէ որոշուած պահուն դրամը

գանձեցի, և ձեզի եկայ այն կերպով որ ինձ
ինձ ցուցուց: Ազլիկանս դժբախտութեան իր
պատասխանատուն, ամէն կերպով իմ խօս-
տումս բռնեցի, կարգը իրենն է իր խօսքը
բռնելու:

Եւ աւելցուց անձկալից ձայնով մը.

— Ազլիկս պիտի վերադարձնէ անանկ չէ՞:

— Կը յուսամ:

— Սակայն դուք զինքը տեսա՞ք:

— Ե՛ս, բայց ոչ, պարզապէս նամակով
մը կ'ըսէր թէ՝ ձեզի ընդունիմ, արձակեմ
ծառաներս ժամը երեքէն առաջ և ուրիշի
ոտքը կոխել չտամ տունիս մէջ՝ ձեր գալու
և մեկնելու ատենը: Եւ եթէ չհաւանէի այդ
առաջարկութեան, էքօ տը ֆրանս լրագրին
մէջ երկու տողով իրեն իմացնելս կը խընդ-
րէր: Բայց չատ երջանիկ եմ Արսէն Լիւբէնի
ծառայութիւն մը մատուցանելով և կը հաւա-
նիմ ամէնուն:

— Պ. Ժէռպուա մըմրաց.

— Աւա՛ղ, այս ամէնը պիտի վերջանայ:

Գրպանէն պանքնօթներուն ծրարը հանեց
սեղանին վրայ դրաւ և երկու մասի բաժ-
նեց, յետոյ լուռ կեցան:

Ատեն ատեն Պ. Ժէռպուա ականջ կու
տար դրանը՝ զանգակին ձայնը կարծելով:

Վայրկեաններուն հետ իր անձկութիւնը
կ'աւելնար և նոյն իսկ Պ. Տէթինան՝ գրեթէ
ցաւազին տպաւորութիւն մը կզգար:

Պ. Ժէռպուա, սաստիկ ընկճուած, երկու
ձեռքերը տոմսակներուն վրայ դրած կը կա-
կաղէր:

— Թող գայ, Աստուած իմ, թող գայ,
ասոնց ամէնքը պիտի տամ Սիւզանը գտնե-
լու համար:

Դուռը յանկարծ բացուեցաւ:

— Կէսը կը բաւէ Պ. Ժէռպուա, բրօֆ-
ֆէօսէրը ներս մտնողին առաջը գնաց:

— Սիւզանը, ո՛ւր է ազլիկս:

Արսէն Լիւբէն խնդալով դուռը գոցեց և
պատասխանեց:

— Պահէ մը պարոն, ձեր ազլիկը բա-
զուկներնուդ մէջը պիտի ըլլայ:

Պ. Տէթինան ապշած մըմրաց:

— Բայց դուռը չի չալեցիք, ես դուռը
իմացայ:

— Բայց ահա հոս եմ և պէտք է. խօս-
քը բրօֆէսէօրին ուղղելով:

— Պ. Ժէռպուա, չնորհակալ եմ, անկա-
րելին ըրիք: Եթէ ինքնաշարժ կառքը ճամ-
բան չխանգարուէր ժամանակին հոս պիտի
գտնուէի և Պարոն Տէթինանի ձանձրոյթ
չէինք պատճառէր, է՛հ առանկ գրուած է
եղեր:

Պանքնօթներու ծրարներէն մին առաւ,
քսանը հինգ հատ տոմսակ համրեց և փառ-
տաքանին երկարելով:

— Ահաւասի՛կ Պ. Ժէռպուայի կողմէ սի-
րելի վարպետս: Չեմ յուսար որ Արսէն Լիւ-
բէնի կողմէ ալ պիտի ընդունի՞ք:

Պ. Տէթինան պահ մը մտածեց և՝

— Ինչո՞ւ չէ ըսաւ:

Լիւբէն զարմացաւ հասկնալով փաստա-
բանին միտքը և միւս ծրարը առնելով քը-
սանը հինգ հատ ևս համրեց փաստաբանին
երկնցուց իսկ մնացորդը գրպանը խօթեց ը-
սելով:

— Խորին չնորհակալութեամբ:

— Բայց, ըսաւ Պ. Տէթինան, Օրիորդ
Ժէռպուան չեկա՞ւ նէ:

— Եթէ վրաս վստահութիւն չունիք,
յարեց Լիւբէն, պատուհանը բացէք և ոտի-
կան կանչեցէք. երկոտասնեակ մը փողոցը
կան:

— Կը կարծէ՞ք:

Արսէն Լիւբէն պատուհանը բացաւ:

— Կը կարծեմ սր Պ. Ժէռպուան տնկարող
եղաւ Կանխարարը չուարեցնելու. ի՛նչ կ'սէի
ահա այդ բարեկէմները, ահա ֆօլանֆանը որ
կը տեսնեմ, և Կրօմը:

Պ. Տէթինան զարմացած զայն կը դիտէր.
Ի՛նչ հանդարտութիւն, կը ժպտէր ալ իբր
թէ տղու խաղով մը կզբօսէր:

Փաստաբանը յարեց:

— Կէտ մը կայ որ լաւ չեմ հասկնար:
Թոյլ կուտաք ինծի հարցնել թէ ինչո՞ւ գրա-
սեղանը ձեր գուրգուրանքին՝ այսքան ա-
ռաքկայ կըլլայ:

Այս խօսքը լսելով Պ. Ժէռպուա գլուխը
տնկեց:

(Շարունակելի)

ՄԵԾ Վ ԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԱՆՆԱԾԻՆԵՐԻ ՄԱՅ

Արանց, Կանանց եւ Տղայոց
ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ՉԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան
Սոյն վաճառատունը, որ տարիներէ
ի վեր իր ուղղութեամբ, ապրանայ
տոկունութեամբ եւ գիններու անմրցելի
աժանութեամբը շահած է բոլոր իրեն
գիմով յաճախորդաց վստահութիւնը,
այս անգամ ձեռնառն յատուկ ընտիր
հազուստներու, կանանց թելոյններու
եւ տղայոց շիք եւ գիմացկուն փաթիւ-
ներու ճոխ մթերք մը պատրաստ ունի,
որ շերմապէս կը յանձնարարուի ամէն
անոնց, որոնք պէտք ունին ներկայ
եղանակին հազուստի եւ ուրիշ նմանո-
րինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 շրշ. է:
Գաւառներէն յանձնարարութիւնք
փութով կը կատարուին: 50—3



ԱՌԻԹԷՆ

ՕԳՏՈՒԵՑԷՔ

ՓՈՒԹԱՑԷՔ ԳԵՆԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ

Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆԻ

Ճեղք պէյ խանին
սակ

Թէյի մեծ վաճառատան թէյերը,
որք ուղղակի ներածուելով Սեյանէ,
Ջիւասսանէ, Հնդկաստանէ, Ճապոնէ եւ Ճա-
թոնէ:

Ամենէն գոհարահաճներն իսկ կըր-
նան գոհանալ թէյերու թարմութեամբ
հոտովն ու համովը:

Փնտռեցէք մանաւանդ իրենց յա-
տուկ խառնուրդները, որք կը ծախ-
ուին մեծ եւ փոքր քանակութեամբ:

Ուշագրութիւն մարտային:

ԿՈՒՋԷՔ ՄՏԱՆԱԼ ՉԷՐ ՈՒՉԱՆԸ ՓՈՍՏԻՆ ԴԱՐՁՈՎ ՈՒ ԱՆՍԵԱԼ

ՕՐԷՐ ԿԸ ՄՈՏԵՆԱՅ

ԳՊՈՐՈՅԱԿԱՆ ԵՄ ԵՐԱՆԸ

ԻՆՉ ԲԱՆԻ ԿՐԷԱՔ ՊԷՏՔ ՈՒՆԵՆԱԼ

ԳՊՈՐՈՅԱԿԱՆ ԼԱԿԱԳՈՅՆ ՊԱՍԱԳՐՔԷՐՈՒ՝ ՈՐՈՏՎ ՎԱԼԵԱՐԱՐՈՒՄ
ԸՍՏԱՆ ՊԱՏ. ՈՒՍՏ. ԽՈՐՀՐԷՐԷ:

ՏՆՕՐԷՆ, ԴԱՏԱԿՐԷԿ, ՇԳՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՆԵՐՈՒ՝ ՈՐՈՏՎ ԸՍՏԱՆ
ՎԿԱՅԵԱԼ, ԱՐԱԿԵՏ ՈՒ ՓՈՐՈՒՄ:

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ, ԶԵՌԱԳՈՐԾԻ ՈՒ ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ՆԻԿՔԷՐՈՒ
ՈՐՈՏՎ ԳՆՈՎ ԱՌԱՆ ԸՍՏԱՆ ՈՒ ՏԵԱԿՈՎ ԽԱՐՈՎ:

ՏՂՈՑ ՆՈՒԷՐԻ ՇԱՄԱՐ ԶԱՆԱԶԱՆ ՆԻԿՔԷՐՈՒ՝ ԹՈՒՔ, ԳՐԻՃ, ԱՆԿԱՆ,
ԿԱՊԱՐԱՐ, ՄԱՍԻՏ, ԲԱՆԱԿ, ՏԵՐԱԿ, ԲԱՐԻՃ, ԲԱՐԵԱՍԻՏԱԿ,
ԿԱԿԻՆ, ԳԾԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԱՆԱԳԱՆ ՆԵՐԿԷՐ ԵՐԷ:

ՏՊԱԳՐԱԿԱՆ ՈՒԷ Է ԳՈՐԾ՝ Ի ՄԸ. ՎԿԱՅԵԱՆ, ՎԻՃԱԿԱՐԱՐՈՅ, ԲԱ-
ՐԵՆԻՔ, ԱՐԱՏՈՒՄԻՔ, ԱՐԱՐԱՐ, ԵՐԱՐԵԱԿԱՆ, ՆԱՆԿԱԳՐԱԿԱՆ
ԱՐԱՐԱՐԱՆ ԵՐԷ: ԻճՃ՝ ՈՐ ԱՐ ԸՍՏԱՆ ԱՆԿԱՆ ԶԵՐ ԱՐԷՐ, ԲԱՆԿԷՐ
ԱՆԳԱՐ ՄԸ ՅՈՎ ԶԱՆԱԶԱՆ ԻՍԿՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ ԱՐԱՐԱՆՆԵՐ
ՎԱՏԱՆ ԸՍՏԱՆ ՔԷ՝ ԽԱՐԱՐԱՆ ԶԱՆԱԶԱՆ, ԲԱՆԻ ՈՐ ԵՐԱՐԱՆ
ԱՐԱՐԱՆ ԱՄՆԻ ՆԵՐԿԱԿԱՆՆԵՐԱՆ ԴԱՐԱՐԷՐԷՆ ԵՐԱՆ ՈՒ ԶՈՒ ԱՐԵՐԻ
ՄԸ ԱՆԿԱՆ Է ԱՐԷՐԷՆ ԵՐԱՆ ՏԵԱԿԱՆՆԵՐԱՆ ՎԵՐԱՅ. ԻճՃ՝ ԱՆԿԱՆ
ԶԵՐԱՐԱՐՈՒՄ ԻՄԱՆԿԱՐԱՐԱՆՆԵՐԻ ՈՒ ՏՈՐԱՆԵՐԻ ԲԱՐԱՐ ԱՐԱՐԱՆՆԵՐ:

Հարցոցէ՝ ու անմիջապէս պիտի պատասխանուի

ապագայեցէ՝ ու պիտի շնորհակալուի որ

ԼԱԿԱԳՈՅՆ ԳԻՆ ԼԱԿԱԳՈՅՆ ԶԵՂԶՈՎ

ԿԱՆԵՐԻ ԳՈՐԾԱՆՈՒԹԻՒՆ

ԴԻՄԵՑԷՔ Կ. ՊՈՒՍ ԽՈՐԱՄԱՆՆԵԱՆ ԽԱՆ ՕՂԷՆԵՐԷՍ ԷՍԿՐԵԱՆ ԳՐԱՏԱՆ

Ա Պ Ա Ռ Ի Կ

Ս ԱՄԻՍ ՊԱՅՄԱՆՍԺԱՄԷՆ ՅԵՏՈՅ ԱՆՊԱՅՄԱՆ ԱՊԱՌԻԿԻ
ԷՅՈՈՐԷ ԱԻԵԼԻ ՏԵՍԱԿ ԻՐԵՂԵՆՔ 5000

Տեղական և Բարիդի 14 և 18 աստիճան ոսկւոյ վրայ բաղմատեսակ գոհարեղէններ, օղ, մատնի, ասեղ, հայլն. նաեւ անուկներու սկզբնատառով գոհարազարդ մատանիներ, ոսկի, արծաթ ժամացոյցներ և նորաձեւ շղթայներ, ասոնցմէ զատ ամէն եղանակի յատուկ պատրաստ և չափու վրայ զգեստներ, կօշիկներ ու զլիարկներ, արանց, կանանց և տղայոց համար: Նաեւ մուշամպա վերարկուներ, բուրդէ և մետաքսէ շրջագգեստի կերպաններ, պատրաստ ճերմակեղէններ նաեւ խասա, ամերիգան, պասմա, եւայլն. և զարդի վերաբերեալ պիտոյք, մեքենաներ՝ լուացքի, լուսանկարի, կրամֆօն, ինչպէս նաեւ կարի (ձօնս. Նովման) և այլն:

Ունինք նաեւ եւրոպական նուրբ ճաշակով պատրաստուած կահ կարստիք, հիւրանոցի, ննջասենեակի, ճաշարանի և խոհանոցի վերաբերեալ ամէն իրէ լէնք, ամէն տեսակ վառարաններ, նաեւ բաղնիքի, խոհանոցի եւրոպական շարժուն օճախ ելն:

Վաճառատունս իր տեսակին մէջ միակն է որ շահած է հանրութեան վստահութիւնը, գնահատուած է նաեւ իր ապրանք տոկոսնութիւնը, նրբութիւնը և աժաւորութիւնը:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղջ

Շաբաթական և ամսական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են:

Հաճեցէք դիմել ՀԵՐԺԱՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶՈՑ ՄԵԾ ՓՈՂՈՑ ԹԻԻ 13

50—42

ՓԱԼԱԳԱՇԵԱՆ
ԱՂԶԿԱՆՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ
ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՏԱԿԱՆ
ԳԻՇԵՐՈԹԻԿ ԵՒ ՅԵՐԵԿԵԱՅ
Կ. Պոլիս, Գասը-գիւղ, Մէօհիւրսար
նասէսի:

Յոգ Տարեւոյցան

Մասնագէտ ուսուցիչներու և ուսուցչուհիներու ձեռամբ, տոհմային ուսումներէ և գիտական անհրաժեշտ ծանօթութիւններէ զատ, հիմնական կերպով կ'աւանդուին Հայերէն, Օսմաներէն, Ֆրանսերէն, Անգղիերէն և Գերմաներէն լեզուները՝ հանդերձ խօ-

սեղավարժութեամբ (բռաբիւ), ինչպէս նաեւ Գծագրութիւն, Տնարարութիւն, Կար ու Ձեւ, Ասեղնագործութեան զանազան տեսակները (ձեռքով և մեքենայով), ձայնական և գործիական երաժշտութիւն, մասնաւորապէս Դաշնակ և Զութակ: Գիշերօթիկները կը վայելեն կատարեալ սնունդ և ընտանեկան անթերի խնամք, առողջապահիկ պայմաններու մէջ:

Բանակցութեան համար դիմել ի վարժարան առ Տեսուչն կամ առ Տեսչուհին: Մանրամասն տեղեկութիւն կարելի է ստանալ նաեւ, Գ. Ն. Շ. օրերը ժամը 5 էն 9 զիմուով ի Գրատուն «ԳԱՐՈՒՆ», Մեծ Նորիան, վերի յարկ, թիւ 55:

Աշակերտութեանց վերամուտը տեղի պիտի ունենայ Սեպտ. 3, Բ. օր:

Հիմնադիր-Տնօրէն
Ե. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ